ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 182/5-Ղ 26.09.2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 51-րդ կետի 9-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 5-րդ կետի 2-րդ ու 6-րդ ենթակետերը՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի կազմից հանել Մեդիաուսումնասիրությունների ու նշանագիտության ամբիոնի նախկին վարիչ, բ.գ.թ., դոցենտ Տարոն Դանիելյանին: Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում որպես ի պաշտոնե անդամ ընդգրկել նույն ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆեսոր Տիգրան Սիմյանին:

2. ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի կազմից սովորողի կարգավիճակի դադարեցման հիմքով հանել սովորող անդամներ Սյունե Սարգսյանին, Ալբերտ Ավետիսյանին, Էդուարդ Պողոսյանին ու Լիանա Քարամյանին:

3. ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում, ըստ ֆակուլտետի ուսանողական խորհրդի որոշման, հաստատել քվեարկությամբ ընտրված հետևյալ ուսանողներին.

Մարինե Մկրտչյան – հեռ. ուսուց. ասպիրանտ, ՈՒԳԸ նախագահ,
Անի Առաքելյան – բակ. 3-րդ կուրսի ուսանողուհի, ՈՒԽ նախագահ,
Շողիկ Ղլիջյան – բակ. 4-րդ կուրսի ուսանողուհի,
Գայանե Ասոյան – բակ. 4-րդ կուրսի ուսանողուհի:

4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ գիտական քարտուղարին, ժուռնալիստիկայի ֆակուլտետին ու խորհրդի անդամներին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հիմք՝ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանի զեկուցագիրը (19.09.2025 թ.):

ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան